# Կին և բարեկեցությունը

Անվճար հավելված

2014 մարտ

www.WomenNet.am

Ամփոփվեցին «Կանանց իրավունքները Հայաստանում. դե յուրե և դե ֆակտո» լրագրողական մրցույթի արդյունքները

էջ4

## Փաստաշար

### Օքսֆամն ահազանգում է

Կլիմայի փոփոխությունները սպառնում են մեր պարենային անվտանգությանը, այնինչ աշխարհը «ցավալիորեն անպատրաստ է» դիմակայելու այս մարտահրավերին, ահազանգում է Օքսֆամ միջազգային կազմակերպությունը:

Կազմակերպության գործադիր տնօրեն Վիննի Բիանյիմանի դիտարկմամբ՝ քաղցի դեմ մղվող պայքարում կլիմայի փոփոխությունը ամենամեծ մարտահրավերն է, և դրան հարմարվելու համար պահանջվող գումարը բնավ չի սնանկացնի աշխարհը. «Դրա համար աղքատ երկրներին անհրաժեշտ է տարեկան շուրջ 100 միլիարդ դոլար, ինչը համարժեք է աշխարհի 100 ամենահարուստ մարդկանց կողմից տնօրինվող հարստության ընդամենը 5 տոկոսին»:

Նշենք, որ Հայաստանում կլիմայական փոփոխությունների հետևանքով առաջացած ռիսկերը, հատկապես վերջերս գրանցված կարկտահարության դեպքերը շարունակաբար մեծացնում են գյուղատնտեսական վնասները՝ սպառնացող վտանգի տակ դնելով երկրի տնտեսական և սոցիալական բարեկեցությունը:

### Մեկնարկեց պարենային անվտանգությունը Հայաստանում ծրագիրը

Այս տարվա փետրվարից Հայաստանում մեկնարկել է Եվրամիության և Օքսֆամի «Հարավային Կովկասում տարածաշրջանային պարենային անվտանգության բարելավում ազգային ռազմավարությունների և մանր ֆերմերային արտադրության միջոցով» քառամյա ծրագիրը, որի բյուջեն կազմում է 596,460 եվրո:

Ծրագիրն իրականացվելու է ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ համագործակցությամբ, աշխատանքներում ակտիվորեն ներգրավված է լինելու նաև 2011-ին Օքսֆամի նախաձեռնությամբ հիմնադրված և 14 տեղական ու միջազգային կազմակերպություններից բաղկացած Գյուղատնտեսական դաշինքը:

Ծրագիրը կնպաստի Հայաստանում պարենային անվտանգությանը, սննդի բարելավմանը, հնարավորություն կտա կանխելու պարենային հնարավոր ճգնաժամային իրավիճակները, ինչպես նաև կխթանի սննդի տեղական արտադրությունը:

## Գործունյա կնոջ ձեռքում քարն էլ է փափկում

**Ասում են՝ սրտով ու հոգով կատարած աշխատանքի շնորհիվ կարելի է անգամ անապատը բնակելի դարձնել: Քարքարոտ ու ամայի մի մեծ հողատարածք Կոշ գյուղի երիտասարդ բնակչուհի Մետաքսյայի տքնանքի արդյունքում վերածվել է կատարյալ դրախտավայրի, մեկ այլ վայրում՝ սարերի մեջ ծվարած Լուսաշող համայնքին հարակից և հեռավոր գյուղերին թարմ մսով ու կաթնամթերքով է ապահովում ֆերմերուհի Սեդիկը: Շատերին հայտնի են Գոմքի արդեն թերևս լեգենդ դարձած կանայք իրենց համեղ ուտեստներով՝ չրով, տապակած ավելուկով, տարբեր տեսակի կանաչեղենով, բալի հյութով, ինչպես նաև մուրաբաներով: Պակաս ախորժալի չեն նաև Լոռու մարզի Նեղոց գյուղից Ռոզայի և Տավուշի մարզի Հովք համայնքից Ալվարդի, Սյունիքի մարզի Տորունիք համայնքից Սվետայի և այլոց ստեղծած բարիքները, որոնց բույրը, համն ու տեսքը կարող են խենթացնել խանութների բնամթերքներից օգտվող քաղաքաբնակին:**

Այս գործունյա ու շնորհալի կանանց մեկտեղեց «Կոնգրես» հյուրանոցի կոնֆերանս դահլիճում մարտի 8-ին կայացած «Գյուղմթերք արտադրող կին հերոս-2014» ազգային մրցանակաբաշխությունը: Միջոցառման ընթացքում Հայաստանի գյուղատնտեսության նախարարությունն ու Գյուղատնտեսական դաշինքը խրախուսական պարգևներ և նվերներ հանձնեցին հանրապետության բոլոր մարզերից ժամանած 20 կին հերոսներին՝ ոլորտում ակտիվ գործունեության և ակնառու հաջողությունների համար:

Դահլիճում տեղադրված տաղավարներով շրջող գյուղատնտեսության նախարար **Սերգո Կարապետյանը,** համտեսելով ներկայացված բերքն ու բարիքը՝ զրուցում էր կանանց հետ, հետաքրքրվում նրանց հաջողություններով և խնդիրներով: Ապա դիմելով լրագրողներին նկատեց, որ գիտի Հայաստանի գյուղմթերքների համեղ լինելու գլխավոր գաղտնիքը:

«Շատերն ասում են, որ բնակլիմայական պայմաններից է, մեր արևի ջերմությունից է, բայց ես կարծում եմ՝ առաջին հերթին կանանց սիրուց է, նվիրվածությունից է, հոգու ջերմությունից է, որ նրանք տալիս են հողին: Դրանով մեր հողը ավելի է հարստանում»,- ասաց Սերգո Կարապետյանը:

Իր ելույթում նախարարն անդրադարձավ նաև գյուղի կանանց խնդիրներին՝ նշելով, որ Հայաստանի գյուղատնտեսական ոլորտում զբաղվածների 57%-ը կանայք են, հետևապես ոլորտում ձեռքբերումները մեծապես կախված են կանանց քրտնաջան աշխատանքից:

«Կանայք իսկապես շատ ծանր, դժվար գործ են անում, նրանք ավելի շատ ձեռքի, քան մեքենայացված աշխատանք են կատարում: Պետությունն անում է ամեն ինչ մեր կանանց հոգսը թեթևացնելու համար», - հավաստիացրեց նա՝ հատկապես կարևորելով կոոպերատիվների ստեղծումն ու զարգացումը մեր երկրում:

Օքսֆամի հայաստանյան գրասենյակի տնօրեն **Մարգարիտա Հակոբյանն** էլ իր ելույթում նշեց, որ մրցանակաբաշխության հիմնական նպատակն է ներկայացնել հանրությանն այն կանանց, ովքեր իրենց հերոսական աշխատանքով արտադրում են մեզ համար ամենօրյա անհրաժեշտություն ներկայացնող պարենամթերք և խթանում տեղական արտադրությունը:

«Այս միջոցառումը նպատակ ունի ոչ միայն խրախուսելու կին ֆերմերներին, այլև հարթակ տրամադրելու նրանց հաջողություններն ու խնդիրները ներկայացնելու համար: Պետությունը պետք է խթանի այդ կանանց, աջակցի նրանց, քանի որ կանայք ստիպված են շատ դժվարությունների դեմ պայքարել՝ սկսած բնակլիմայական պայմաններից մինչև արտադրանքի իրացումը»,- ասաց նա՝ նույնպես կարևորելով կոոպերատիվների դերը և նշելով, որ Օքսֆամի ծրագրերի շրջանակում մինչ օրս ստեղծվել է 18 կոոպերատիվ, այդ թվում՝ 6-ը բացառապես կանանց գյուղատնտեսական կոոպերատիվներ են, որոնք զգալի հաջողությունների են հասել:

Հայաստանում Միացյալ Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան **Քեթրին Լիչը**, իր հերթին, կարևորեց կանանց դերը Օքսֆամի կողմից Հայաստանի գյուղական համայնքներում իրականացվող զարգացման ծրագրերում: «Հզորացնելով կնոջը, մեծացնելով կնոջ եկամուտները, նպաստելով նրա աշխատանքային հաջողություններին՝ մենք նպաստում ենք նաև ընտանիքի ամրապնդմանը»,- ասաց դեսպան Լիչը:

## Շնորհավորում ենք

Թերևս ամենակարևոր հանգամանքը, որ միավորում է «Գյուղմթերք արտադրող կին հերոս» մրցանակաբաշխության հաղթողներին, այն է, որ բոլորն էլ պրպտող, ստեղծագործող, հայրենի հող ու ջրին կպած կանայք են, ապագայի նկատմամբ մեծ հույսով և ծրագրերով: Նրանց թեկնածությունները ներկայացրել էին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը՝ մարզպետարանների միջնորդությամբ, և Գյուղատնտեսական դաշինքի անդամներից՝ Օքսֆամի հայաստանյան գրասենյակը, ՎԻՍՏԱՍ փորձագիտական կենտրոնը, Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան, ICARE հիմնադրամը, ԱՄՔՈՐ և «Ֆարմ կրեդիտ Արմենիա» կազմակերպությունները, «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ն:

### «Գյուղմթերք արտադրող կին հերոս-2014» կոչմանն արժանացել են.

**Մետաքսյա Պետրոսյանը** (Արագածոտն, Կոշ)
**Կիմա Բաղդասարյանը** (Արագածոտն, Վ. Բազմաբերդ)
**Սեդիկ Մարտիրոսյանը** (Արարատ, Լուսաշող)
**Հասմիկ Սաֆարյանը** (Արարատ, Վեդի)
**Ռիմա Հովագիմյանը** (Արմավիր, Արագած)
**Զուլիետա Սարգսյանը** (Արմավիր, Արտաշար)
**Ռոզա Սիրականյանը** (Գեղարքունիք, Վարդաձոր)
**Արմենուհի Աղաբաբյանը** (Լոռի, Ախթալա)
**Ռոզա Կիրակոսյանը** (Լոռի, Նեղոց)
**Մարիամ Գևորգյանը** (Կոտայք, Գառնի)
**Լիլյա Ավետիսյանը** (Կոտայք, Ջրառատ)
**Լուսիկ Թովմասյանը** (Շիրակ, Ազատան)
**Նյուրա Բարխուդարյանը** (Սյունիք, Նորավան)
**Սվետիկ Կարապետյանը** (Սյունիք, Տորունիք)
**Մարիամ Մարգարյանը** (Վայոց ձոր, Ազատեկ)
**Շաղիկ Գյուլամիրյանը** (Վայոց ձոր, Ջեղեա)
**Զամիրա Իսրայելյանը** (Տավուշ, Հաղթանակ)
**Ալվարդ Չատյանը** (Տավուշ, Հովք)
**Սոնա Ղազարյանը** (Տավուշ, Ներքին Ծաղկավան)

## Նոր սերունդ

### «Կանա՛յք, վստահե՛ք ձեր ուժերին և առա՛ջ շարժվեք»

- այս կոչով է դիմում իր համագյուղացի կանանց Արմավիրի մարզի Լուկաշին գյուղից 24-ամյա Անուշ Ջեյնալյանը: Նրան գյուղում ճանաչում են որպես տեղի միջնակարգ դպրոցի աշխարհագրության ուսուցչուհու, սակայն պարզվում է՝ երիտասարդ ուսուցչուհին զբաղվում է նաև չրի արտադրությամբ:

Չրանոց ունենալու մտահղացումն Անուշի մեջ առաջացել էր, երբ որպես «ԱՄՔՈՐ»-ի աջակցությամբ հիմնված «Լուկաշինի գյուղատնտեսական ասոցիացիայի» անդամ մասնակցել է ասոցիացիային կից գործող չրանոցի աշխատանքներին: Չորացնում է բանջարաբոստանային կուլտուրաների բերքն ու տարբեր մրգեր: Անուշը նաև Լուկաշինի կանանց խորհրդի ակտիվ անդամներից է, «ԱՄՔՈՐ»-ի հումանիտար ծրագրերի ակտիվ մասնակից՝ սկսած առաջին դասարանցիներին գրենական պիտույքների բաշխումից վերջացրած գյուղի կենսաթոշակառուներին ցուցաբերվող օգնությամբ:

### «Հաջողության բանալին համբերատարությունն է ու սերը աշխատանքի նկատմամբ»

- կարծում է Արմավիրի մարզի Արագած համայնքի բնակչուհի Ռիմա Հովագիմյանը, ով թեեւ 32 տարեկան է, բայց ունի 15 տարվա աշխատանքային փորձ և հասել է լուրջ հաջողությունների՝ իր անձնական օրինակով նպաստելով համայնքում գյուղմթերքների արտադրության ծավալների ավելացմանը:

Ռիմա Հովագիմյանը Արագած համայնքում աշխատում է որպես պատմության ուսուցչուհի, նաև ավագանու անդամ է: Ասում է՝ քանի որ գյուղում է ապրում, ապա ամեն ինչի հիմքը համարում է գյուղական աշխատանքը: Նա մեծ ուրախությամբ ու ոգևորությամբ ցույց է տալիս 200 քմ ջերմոցը, որը նախատեսված է տարբեր բանջարաբոստանային կուլտուրաների համար, 2500 քմ հողամասը, որտեղ կանաչին էր տալիս թարխունը, և 7000-8000 քմ հողամասը՝ նախատեսված վաղահաս կարտոֆիլի ցանքսի համար:

- Դաշտային աշխատանքները հիմնականում կատարում եմ ոչ աշխատանքային օրերին, որպեսզի կարողանամ համատեղել ուսուցչի գործն ու գյուղատնտեսությունը,- ժպտալով ասում է Ռիման, ով նաև հրաշալի երկվորյակ տղաների մայր է:

### Հասոյի լեգենդար պանիրը

Արարատի մարզի Վեդի քաղաքում «Հասոյի լեգենդար պանիրը» հայտնի ապրանքանիշ է, թեպետ՝ ոչ պաշտոնապես գրանցված, այլ զուտ ժողովրդական բանահյուսության մակարդակում: Համայնքում բարձր պահանջարկ վայելող համեղ ու օգտակար այս մթերքի հեղինակը Վեդի քաղաքի բնակչուհի, հաջողակ ֆերմեր Հասմիկ Սաֆարյանն է:

- Ոչինչ հենց այնպես մարդուն չի տրվում,- ասում է երկու բարձրագույն կրթություն (բժշկական և տնտեսագիտական) ունեցող Հասմիկը, - ո՛չ անուն, ո՛չ բարի համբավ, ո՛չ հարգանք, ո՛չ էլ, ի դեպ, վարկ:

- Սեփական միջոցները հաճախ չեն բավարարում նախանշած գործարար նպատակներն իրականացնելու համար, լրացուցիչ օժանդակության կարիք է զգացվում: Նման կարիքի դեպքում մարդը հաճախ դիմում է իր հարազատին, ընկերոջը: Իմ բիզնեսի պարագայում այդ ընկերը «Ֆարմ կրեդիտն» է,- ասում է Հասմիկը:

## Անձնական օրինակ

### «Մեր երկիրը մեր տունն է, լինի հարուստ թե աղքատ, մերն է, մենք պետք է շենացնենք»

**Այս պարզ ճշմարտությունը տասնամյակներ շարունակ եղել է Սեդիկ Մարտիրոսյանի կյանքի խորհուրդն ու նաև ուղեկիցը:**

Քառասուներկու տարի առաջ Արարատի մարզի Լուսաշող գյուղ հարս եկած Սեդիկն իր հետ «օժիտ» էր բերել Կամո քաղաքի (ներկայիս Գավառ) տեխնիկումում ստացած անասնաբույծի մասնագիտությունն ու ծնողներից ժառանգած աշխատասիրությունը: Գիտեր, որ միայն ամուսնուն թևութիկունք լինելով ու համատեղ աշխատանքով է հնարավոր հաղթահարել բոլոր դժվարությունները, ստեղծել բերք ու բարիք, և այդ դեպքում, ինչպես ժողովրդական առածն է ասում՝ աղքատությունը կվախենա աշխատողի տունը մտնելուց:

Թեև Սեդիկի համար դժվար էր չորս երեխաների խնամքը համատեղել անասնապահության ու միաժամանակ հողագործական աշխատանքների հետ, այնուամենայնիվ աշխատասիրության և համառության շնորհիվ նրան հաջողվում էր լինել բոլոր «դիրքերում»:

Այսօր արդեն գյուղական իր ֆերմայում Սեդիկի խնամքի և հոգատարության տակ շուրջ 200 խոշոր եղջերավոր անասուն կա, որից 50-ը՝ կով, բացի դրանից, 10-15 ոչխար ու մի քանի նորածին գառներ կան: Ճիշտ է, հին անասնագոմում արդեն նեղվածք է, սակայն քիչ հեռվում կառուցված նորն ու ընդարձակը գարնանը պատրաստ է դիմավորելու իր «բնակիչներին»:

Հարցնում եմ՝ օրվա մեջ քանի՞ ժամ է աշխատում, ասում է՝ավելի լավ է հարցնես, թե քանի ժամ եմ հանգստանում:

«Լույսը դեռ չբացված՝ արդեն անասնագոմում եմ, մեկ առ մեկ ստուգում եմ անասունների վիճակը: Եթե հիվանդ են լինում, ինքս եմ բուժում, հետևները զրուցում եմ, շոյում, նրանք էլ են փաղաքշանքի ու ջերմության կարոտ: Իմ հանգստի ժամը գիշերվա ժամը 1-4-ն է, իսկ ամռանը՝ ավելի քիչ: Մինչև կովերին կթում եմ, կաթից պանիր սարքում, դառնում է գիշերվա 1-ը, մի երեք ժամ հանգստանում եմ ու ժամը 4-5-ին՝ անասուններին հանդ ուղարկելու համար դարձյալ ոտքի վրա եմ»,- պատմում է Սեդիկն ու հավելում, որ աշխատանքը երբեք վերջ չունի, որովհետև ձգտող և արարող մարդու բարեկեցությունը ստեղծվում է միայն հետևողական աշխատանքի արդյունքում:

Ամուսնու մահից հետո Սեդիկի թևութիկունքը զավակներն ու հարսներն են: Ճիշտ է, սեզոնային աշխատանքներին զգացվում է լրացուցիչ ձեռքի կարիք, բայց հիմնական աշխատուժը տան անդամներն են:

«Երեք տղա ունեմ, մեկ աղջիկ: Տղաներից ոչ մեկն աշխատանք փնտրելու հույսով գյուղից հեռանալու, քաղաքում կամ թե երկրից դուրս գնալու ցանկություն չունի: Իսկ ո՞ւր գնան, եթե այստեղ էլ աշխատանք կա: Հաճախորդների պակաս, փառք Աստծո, չկա, ու ո՛չ պանիրն է մնում «գետնին», ո՛չ միսը, հակառակ դեպքում այլ բնամթերքի հետ փոխանակումը կա ու կա»...

### «Ինձ ուժ տվողը հողն է, ծաղկած դաշտերը...»

**«Մասնագիտությամբ մանկավարժ եմ, ինստիտուտն ավարտելուց հետո աշխատել եմ որպես ուսուցչուհի, մանկապարտեզի վարիչ: Ամուսինս ինժեներ է, աշխատել է Գյումրու գիտափորձնական ինստիտուտում: Սակայն երկրաշարժին շատերի նման մենք էլ կորցրինք մեր աշխատատեղերը, դժվարությամբ վերագտանք մեզ», - պատմում է Շիրակի մարզի Ազատան գյուղի բնակչուհի Լուսիկ Թովմասյանը, ով այսօր շատերին հայտնի է որպես կարտոֆիլի մշակությամբ զբաղվող անհատ ձեռներեց:**

Հետերկրաշարժյան դժվարին տարիները սակայն չկոտրեցին տիկին Լուսիկի կամքը, նա չընկճվեց ու չխոնարհվեց դժվարությունների առաջ, այլ ամուսնու հետ ձեռնամուխ եղավ գյուղատնտեսական աշխատանքին:

- Ամեն ինչ սկսվեց 1994 թվականից՝ ընդամենը 8000 մ հողատարածությունից, որը ես ու ամուսինս վերցրինք վարձակալական հիմունքներով և տարիների տքնաջան աշխատանքի արդյունքում հասցրեցինք մինչև 126 հա-ի: Գիշեր-ցերեկ տուն չենք եկել դաշտից, մշակել ենք, ցանել, ոգևորվել ու մեր աշխատանքով ոգևորել համագյուղացիներին: Այդ մութ ու խավար տարիներին մեր անձնական օրինակով ու խանդավառությամբ շատերին վարակեցինք, չմեկնեցինք արտագնա աշխատանքի ու փորձեցինք մեր հանապազօրյա հացը վաստակել սեփական հողում:

- Այսօր ինչի որ հասել ենք, միայն իմ աշխատանքի արդյունքը չէ: Եթե չլիներ ամուսնուս աջակցությունը, ես միայնակ չէի կարող այս ամենը անել: Մենք շատ տարբեր ենք, և դա օգնում է լրացնելու մեկս մյուսիս: Եթե չլինեին մեր համագործակցությունն ու աշխատանքի ճիշտ բաժանումը, դժվար թե առանձին-առանձին կարողանայինք որևէ արդյունքի հասնել:

Ձեռներեց ամուսիններն անհաղորդ չեն նաև ուրիշի ցավին ու դժվարություններին: Մեկ անգամ չէ, որ օգնության ձեռք են մեկնել հաշմանդամություն ունեցող, սոցիալապես անապահով երեխաներին և ազատամարտիկներին...

Լուսիկ Թովմասյանը չի սիրում դժգոհել ու շատ խոսել դժվարություններից, սակայն այն, ինչ այսօր կատարվում է Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում, շատ է մտահոգում նրան:

Չնայած դրան՝ տիկին Լուսիկը չի մտածում երկրից մեկնելու մասին: Նրա երազանքն է, որ վերականգնվի ու զարգանա մեր տնտեսությունը, աշխատատեղեր ստեղծվեն, և իր երեխաներն ու թոռներն ապրեն բարեկեցիկ Հայաստանում.

- Ես շատ եմ սիրում իմ հայրենիքը, իմ գյուղը, սա մեր հողն է, այստեղ մենք մեզ ազատ ու վստահ ենք զգում: Ուրիշ երկիրն ինչքան էլ լավ, սիրուն լինի, միևնույնն է, էդ սիրունը մերը չէ: Կուզենամ՝ էնքան գումար ունենանք, որ գնանք արտերկրում ման գանք, բայց էլի հետ գանք, ապրենք ու արարենք մեր գյուղում: Մեր հողը, ծաղկած դաշտերը, մեր բնությունն ու մարդկանց ջերմությունն են ինձ ուժ տվողը....

> *«Ճիշտ է, գյուղացու աշխատանքը անչափ դժվար է՝ բաց երկնքի տակ ու բնության քմահաճույքից կախված, սակայն դրանից չենք դժգոհում, մեր ամենամեծ խնդիրն այսօր շուկայի բացակայությունն է, իրացման մեծ խնդիրներ ունենք: Շատ անգամ ստիպված ինքնարժեքից ցածր ենք վաճառում ապրանքը, միայն թե չթափենք: Արդյունքում տուժում է գյուղացին, ով նոր սերմացու ձեռք բերելու համար արդեն ստիպված վարկեր է վերցնում: Գնացե՛ք բանկերը, մեծ մասը գյուղացիներ են հերթի մեջ, մի բանկից վերցնում են, որ մյուս բանկի վարկը մարեն... Ահավոր վիճակ է, 22-24 տոկոսով գյուղացուն վարկ տալը ի վերջո հանգեցնում է նրան, որ մարդիկ ստիպված ամեն ինչ թողնում ու գնում են երկրից: Սիրտս մղկտում է յուրաքանչյուր գնացողի համար, հիմա էլ սկսել են ընտանիքներով հեռանալ...»*

### «Կին, որ գյուղի հույսն ու հավատն է»

**Տավուշի մարզի սահմանամերձ Ներքին Ծաղկավան համայնքում չկա մեկը, որ աշխատասիրության առումով առաջինը չնշի Սոնա Ղազարյանի անունը: Կին, ով գիշեր-ցերեկ առաջին բուժօգնություն է ցույց տալիս 2 կմ ձգվող համայնքի բնակչությանը՝ երբեք չդժգոհելով ու չտրտնջալով: Նա գյուղի բուժքույրն է, բայց նաև հմուտ գյուղատնտես: Նրա վարած տնտեսությունն առանձնանում է մյուսներից՝ խնամված, ցուցադրական:**



-Ուր ընտանիքում բոլորն են աշխատել՝ լավ գիտակցելով, որ անգործությունն ամենամեծ չարիքն է: Ես իմ հոգու անդորրը, սթրեսներից ազատվելը գտնում եմ միայն հողի հետ աշխատելու մեջ: Եթե նրան վստահում ես, երբեք ձեռնունայն չես մնում:

Սոնան մասնակցում է նաև «Ծաղկունք» կոոպերատիվի գործունեությանը: Օքսֆամի կողմից գյուղում հիմնադրված ջերմոցի աշխատանքներին նա վերաբերվում է առանձնակի նվիրումով.

- Շատ լավ ծրագիր է, նորություն է, ջերմոցային տնտեսության շնորհիվ աշխատատեղեր են ստեղծել, մարդիկ օգտվում են, մատչելի գնով լոլիկ են գնում անմիջապես ջերմոցից, միասին բարիք ենք ստեղծում: Շատ ուրախ եմ նաև, որ կանանց ներգրավվածությունը ծրագրում ակտիվ է, որ նրանց ձայնը լսելի է, մասնակցում են կոոպերատիվի որոշումների կայացմանը:

## Հաջողության բանաձեւ

# «Մեր տան ամեն ինչը բնական է»

**«Մինչև մեր այգու բարիքներից չուտեք, սուրճ չխմեք, հաց չուտեք, ես ուղղակի չեմ խոսի: Հայրս ասում էր՝ երբ Երևանից մարդ է գալիս, նա երկար ճանապարհ է անցած լինում ու հաստատ քաղցած կլինի»,- ինձ այսպես դիմավորեց Մարիամ Գևորգյանը, ով ապրում է Կոտայքի մարզի Գառնի գյուղում ու արդեն հինգ տարուց ի վեր ակտիվ զբաղվում է գյուղատնտեսական աշխատանքներով:**

«Քսաներեք տարեկան էի, որ ամուսնացա, ճիշտ է, գյուղի գործերն ինձ ծանոթ էին, քանի որ ծնվել-մեծացել էի գյուղում, սակայն սկեսրոջս տանը միայն կենցաղային գործերով էի զբաղվում: Մաման (սկեսուրը.-խմբ.) շատ աշխատասեր կին է, ամեն ինչ ինքը հասցնում էր, ու ինձ էլ ոչինչ չէր մնում անելու»,- ասում է Մարիամն ու արագ-արագ ափսեիս մեջ շարում էր իր ձեռքով աճեցրած մրգերը:

Մեր զրույցին միանում է նաև Մարիամի սկեսուրը՝ տիկին Ելենան, ու սկսում պատմել Մարիամի աշխատասիրությունից, ակտիվությունից:

«Ասեցին՝ լավ աղջիկ կա, ու ես էլ մի քանի անգամ տեսել էի իրեն: Այն վատ տարիներին հոր հետ գերանդին դնում էր ուսին ու գնում էր դաշտ խոտ հնձելու, ասեցի՝ որ էս աղջիկը կարողանում է գերանդի քաշել, ուրեմն մեզ էսպես էլ հարս ա պետք,- բարձր ծիծաղելով ասում է տիկին Ելենան ու ավելացնում,- իհարկե, այդ ամենը հումոր է, քանի որ Մարիամը առաջին հերթին լավ մարդ է»:

Մոտ հինգ տարի առաջ Մարիամի սկեսուրը և սկեսայրը որոշեցին տեղափոխվել Լեռնային Ղարաբաղ մշտական բնակության: Իսկ Գառնիի այգիները մնացին Մարիամի ուսերին: Ամուսինն էլ այդ տարի արտագնա աշխատանքի էր մեկնել:

«Սկզբում դժվար էր, քանի որ ընտանիքի հոգսը, երեխաների դաստիարակությունը, դրա հետ մեկտեղ՝ խնձորի ու խաղողի այգիները... Մի խոսքով, ռիսկի դիմեցի, ու հիմա արդյունքը տեսնում եք՝ մեր տան ամեն ինչը բնական է»:

Մարիամի խոսքով՝ իր հիմնական եկամուտը, ապրուստի միջոցը այս այգիներն են:

Մարիամի ու տիկին Ելենայի հետ գնում ենք խաղողի ու խնձորի այգիներում շրջելու, որոնք տնից բավական հեռու են, իսկ ճանապարհը՝ քարքարոտ: Հետևաբար պետք է մեքենայով գնանք:

«Արդեն 13 տարի է, մեքենա եմ վարում, ու բոլորն ակնապիշ նայում են»,- ասում է Մարիամը, սակայն սկեսուր մայրիկը միանգամից ավելացնում է.- «Մարիա՛մ ջան, կարևորը՝ մենք չենք նեղվում, ու մեքենան քեզ շատ օգնում ա,- հետո մի փոքր ուշ քթի տակ ծիծաղելով ավելացնում է,- բա որ Մարիամն ինձ ավտոյով տանում ա, ասենք, վարսավիրանոց կամ ինչ-որ տեղ, մենակ տենաք՝ ո՞նց են զարմանում, որ իմանում են հարսս է»...

Հասնում ենք այգու մոտ: Ի տարբերություն մյուս հողամասի՝ այստեղ խաղողի վազերը գտնվում են Գառնու ձորի պռնկին, ու անգամ այնտեղ կանգնելը փոքր-ինչ վտանգավոր է: Բայց Մարիամն ասում է՝ իրենք արդեն սովորել են ու ծիծաղելով ավելացնում.

- Դե պատկերացրեք, որ էս ձորի միջից ես խաղողը բարձրացնում եմ վերև, բայց չեմ դժգոհում՝ հաճույքով եմ այդ գործն անում...

# «Տարիների ընթացքում զարգացրել եմ տնտեսությունս»

**Սյունիքի մարզի հեռավոր անկյուններից մեկում ծվարած Տորունիք համայնքը գտնվում է Սիսիան քաղաքից մոտ 20 կմ հեռավորության վրա: Ներկայումս համայնքն ունի 30 ծուխ և 80-ից ավելի բնակչություն, որը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ:**

Սվետիկ Կարապետյանը մասնագիտությամբ դերձակուհի է: Որոշ ժամանակ աշխատել է Սիսիանի տրիկոտաժի ֆաբրիկայում, սակայն 90-ականներին, երբ ֆաբրիկան գործունեությունը դադարեցնում է, նա իր միակ որդու հետ տեղափոխվում է Սիսիանի տարածաշրջանի Տորունիք համայնք:

«Սկզբնական շրջանում շատ դժվար էր, ապրուստի միջոց հայթայթելու համար կատարել եմ զանազան աշխատանքներ՝ անհատների ֆերմաներում աշխատել եմ որպես կթվորուհի, զբաղվել հողի մշակությամբ և հովվությամբ: 1996-ից ստեղծել եմ իմ սեփական տնտեսությունը, հիմնականում այծաբուծությամբ և ոչխարաբուծությամբ եմ զբաղվում, դրանով էլ հոգում եմ ընտանիքիս կարիքները»,- պատմում է Սվետիկ Կարապետյանը:

Ֆերմայի կառավարումն ու գյուղատնտեսական աշխատանքները նա է կատարում, իսկ որդին զբաղվում է հովվությամբ: Վերջերս որոշում են կայացրել տնտեսությունը զարգացնել հիմնականում երկու ճյուղերով՝ տավարաբուծությամբ և ոչխարաբուծությամբ՝ համոզված, որ դրանք ընտանիքին մեծ եկամուտ կապահովեն:

«Տարիների ընթացքում զարգացրել եմ սեփական տնտեսությունս: Ներկայումս ունեմ 9 խոշոր, 45 մանր եղջերավոր անասուն և 30-ից ավելի թռչուն, 2 ձի, 2 մտրուկ, ինչպես նաև 5 հա հողատարածք, որից 2 հա-ը ձեռք եմ բերել 2013-ին: Զբաղվում եմ նաև մշակաբույսերի և բանջարանոցային կուլտուրաների մշակությամբ»,- նշում է նա:

Անասնաբուծությունից ստացված մսից ու կաթից է ձևավորվում ընտանիքի հիմնական եկամուտը, մի մասն էլ կազմում են դաշտավարությունից, բանջարաբոստանային կուլտուրաների և անասնակերի վաճառքից ստացված եկամուտները:

Սվետիկ Կարապետյանը «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի կողմից իրականացվող «Անասնապահության զարգացում Սյունիքի մարզում» ծրագրի մասնակից է: Ծրագիրը ֆինանսավորվում է Շվեյցարիայի Համադաշնության Զարգացման և համագործակցության գործակալության կողմից: «Ներկայումս ընդգրկված եմ ծրագրի շրջանակներում իրականացվող «Կանանց գլխավորությամբ ընտանիքների ֆերմերային տնտեսությունների կարողությունների և հմտությունների զարգացում» ենթածրագրում, որի նպատակն է զարգացնել կանանց կարողություններն անասնապահության և ձեռներեցության ոլորտներում»,- հավելում է Սվետիկ Կարապետյանը:

# «Երբեք չեմ մտածում քաղաքում ապրելու մասին»

**Կոտայքի մարզի Զրառատ գյուղ հասնելը, թվում է, դժվար չէ: Սակայն պարզվում է, որ Մալոչկի կոչվող թաղամաս հասնելու համար ջանքեր են պետք: Պատճառը, իհարկե, անբարեկարգ ճանապարհն է: Ընդամենը մի քանի կիլոմետր է, բայց մեքենաները այստեղ մեծ դժվարությամբ են հասնում, հատկապես ձմռան ամիսներին:**

Թաղամասի բնակիչ Լիլյա Ավետիսյանին անբարեկարգ ճանապարհները չեն ընկճում. նա ամեն օր իր սեփական մեքենայով գալիս է Երևան, որից հետո՝ Չարենցավան և գրեթե բոլոր խանութներին առաքում է Հրազդանի թարմ «քարե» հացը: Իրականում նրա հիմնական զբաղմունքը ոչ թե առաքիչ աշխատելն է, այլ անասնապահությամբ ու գյուղատնտեսությամբ զբաղվելը:

«Երբ սկեսրոջիցս առանձնացանք, ես ու ամուսինս որոշեցինք, որ պետք է շատ կով ու ոչխար պահենք, որ կարողանանք տունուտեղ դնել: Մեզ օգնեց «Ֆարմ կրեդիտը»՝ տրակտոր տրամադրելով, ինչը մեր գործը շատ հեշտացրեց: Հիմա ունեմ 5 կով, 50 գլուխ ոչխար»,- ասում է Լիլյան:

Սեփական մեքենա ունենալը շատ է օգնում Լիլյային նաև կաթը իրացնելու հարցում:

- Իհարկե, մեքենայիս ապակիները մուգ են, չի երևում, որ ղեկի առաջ կին է, բայց երբ տեսնում են՝ շատ հետաքրքրությամբ են նայում, քանի որ Հրազդանում կին վարորդ քիչ կա: Դե հիմա, նայեն-չնայեն՝ իմ ընտանիքին ավելի ձեռնտու է, որ ես սեփական մեքենա ունենամ, որ կարողանամ կաթը տանել ու վաճառել:Լիլյան ասում է, որ գործը մեծ հաճույքով է անում ու երբեք չի մտածում քաղաքում ապրելու մասին, քանի որ անասնապահությամբ զբաղվելով լավ եկամուտ է ստանում:

Լիլյայի ամուսինը՝ Արսենը, շատ է հպարտանում կնոջով, ասում է՝ շատ լավ է, երբ կողքիդ կինը գործունյա է, աշխատող ու քեզ թևութիկունք է, ու ընտանեկան դժվարությունները միասին են հաղթահարում: Ամուսինները պատմում են, որ շատ հաճախ են դրսից իրենց աշխատանքի առաջարկներ արել, բայց չեն գնացել, քանի որ իրենց դռանն էլ կարողանում են կարգին վաստակել ու կենցաղային կարիքները հոգալ:

«Տեսեք՝ շատ գյուղացիներ կան, որ վարկեր են վերցնում ու հետո չեն կարողանում այն վերադարձնել, բայց մինչև վերցնելը պիտի ծանրութեթև անես ու հասկանաս՝ կարո՞ղ ես վարկի տակից դուրս գալ: Եթե տեղին օգտագործես, շատ լավ բան է վարկի տրամադրումը»,- ասում է Լիլյան ու բացահայտում մի քանի գաղտնիքներ բիզնեսում հաջողության հասնելու համար:

- Ես միշտ վարկ եմ ստացել ու այդ փողից թեկուզ 10 դրամ չեմ ծախսել տան համար կամ թեկուզ մի շոր ու կոշիկ չեմ առել երեխաների համար: Եթե վարկը վերցրել եմ, որ անասուն առնեմ-շատացնեմ, ուրեմն հենց դրա համար էլ օգտագործել եմ: Եթե էդպես չանեմ, հաստատ ուրիշների նման կընկնեմ տոկոսի տակ,- ասում է Լիլյան՝ նշելով, որ գարունը բացվելուն պես պետք է մեծացնի գոմի տարածքը ու շատացնի կովերի գլխաքանակը:

## Դիմանկար

# «Ապրել բնության մեջ ու բնության հետ»

**«Եթե մեկն ասի՝ պրոբլեմ չունի, ուրեմն նա չի աշխատում կամ խուսափում է աշխատանքից, թե չէ ինչպե՞ս կարող է աշխատող մարդը պրոբլեմներ չունենալ, հենց դրանց հաղթահարման մեջ է հաջողության բանաձևը»,- ասում է Արագածոտնի մարզի Կոշ գյուղից ֆերմեր Մետաքսյա Պետրոսյանը:**

Նուրբ ու գեղեցիկ դիմագծերով երիտասարդ կնոջ մաքուր ու կոկիկ տեսքից զարմացած եմ, չէ՞ որ առավոտից երեկո անասնագոմում է, ուր աշխատանքին վերջ չկա, այդ ինչպե՞ս է կարողանում այդպիսին մնալ: Ու երբ նրա հետ մտնում եմ անասնագոմ, հասկանում եմ, որ ինչպես մարդն է, այնպես էլ իր գործն է: Իսկ այնտեղ տիրում է կատարյալ մաքրություն, ուստի զարմանալի չէ, որ «Աշտարակ կաթ» կազմակերպությունը նախընտրում է Մետաքսյայի ֆերմայի կաթը, իսկ համագյուղացիներն ու հեռավոր ծանոթները՝ տավարի միսն ու նրա պատրաստած պանիրը: Գիտեն՝ ումից են գնում, համոզված են, որ գնված մթերքն անարատ է ու մաքուր, որովհետև անասունները սնվում են միայն ժամանակին սեփականաշնորհած հանդամասի խոտով:

Երբ Կոշ գյուղ հարս եկավ, ընդամենը երեք կով ունեին: Դժվար տարիներ էին, երեխաները (երկու տղա, մեկ աղջիկ) մեծանում էին, հոգսերն էլ՝ նրանց հետ: Գյուղում աշխատանք չկար, թեև այսօր էլ վիճակը նույնն է, ամուսինը՝ Վաչիկն էլ որոշեց վերջ տալ արտագնա աշխատանքին, քանի որ բերած երկու կոպեկը վերջանալուն պես դարձյալ նույն խնդիրների առաջ էին կանգնում:

Երկար-բարակ կշռադատելուց հետո Մետաքսյան որոշեց սկեսրայրին, սկեսրոջն ու ամուսնուն հայտնել իր նախաձեռնության մասին՝ զբաղվել անասնապահությամբ, կառուցել անասնագոմ ու ավելացնել անասնագլխաքանակը: Նրա վճռականությունն ու համարձակությունը վստահություն էին ներշնչում, ուստի տան մեծերը չառարկեցին, իսկ ամուսինը մի քիչ չեմուչումից հետո որոշեց «միս ու արյուն տալ» կնոջ գաղափարին, ու մեկմեկու աջակցելով ստեղծեցին իրենց ֆերման:

Այսօր ֆերմայում կան շուրջ 50 գլուխ կով, հորթ, երինջ ու ցլիկ, սակայն Մետաքսյան եղածով չի սահմանափակվում, նա միաժամանակ զբաղվում է նաև այգեգործությամբ: Ավելի քան 3 հեկտար հողատարածքի վրա մշակվող խաղողը, խնձորը, դեղձը, տանձը, ընկույզը, թուզն ու հոնը նույնպես գետնին չեն մնում, ու քանի որ բերքատու հողի բերքն էլ համեղ է լինում, ուստի դրանց հաճախորդներն անհամբեր սպասում են «սեզոնի» բացմանը:

Բոլորի նման Մետաքսյան էլ երազանք ունի՝ ցանկանում է ընդլայնել անասնագոմը, հավ ու խոզ պահել, սեփականաշնորհած հողատարածքներն արդյունավետ օգտագործել ու հենց այստեղ էլ քարե տուն կառուցելով՝ ապրել բնության մեջ ու բնության հետ:

# Մի ձեռքը ծափ չի տալիս

Ինչպե՞ս է ձեզ հաջողվում միաժամանակ համայնքապետարանում հաշվապահություն անել և հասցնել զբաղվել ոչ միայն ջերմոցատնտեսությամբ, այլև անասնապահությամբ: Մեր այս հարցին Արմավիրի մարզի Արտաշար համայնքի բնակիչ ֆերմեր Զուլիետա Սարգսյանը պատասխանում է.

- Մի ձեռքը ծափ չի տալիս, ինձ օգնում են 10 հոգուց բաղկացած ընտանիքիս բոլոր անդամները՝ սկսած տարեց մորիցս մինչև եղբորս փոքրիկ թոռնիկները՝ իմ անվանակից Զուլիետան և Նորիկը:

Սեփական ջերմոցային տնտեսություն և ֆերմա ունենալն իր պատմությունն ունի, որի հիմքում «Ֆարմ կրեդիտ Արմենիայից» ստացած եւ հաջողությամբ իրագործված վարկերն են: Տիկին Զուլիետայի հաջողության հասնելու բանալին մարդկանց վստահությունն է, որը նա վայելում է ինչպես ընտանիքում, այնպես էլ աշխատավայրում:

- Գլուխ չեմ գովում, բայց թե՛ եղբայրս, թե՛ իր որդիներն ինչ գործ էլ սկսեն՝ առաջին հերթին ինձանից են խորհուրդ հարցնում,- ասում է տիկին Զուլիետան:

## Կանանց գյուղատնտեսական կոոպերատիվներ

# «Ամեն ինչն էլ սիրով եմ անում, դրա համար էլ հասցնում եմ»

**Շաղիկ Գյուլամիրյանը ընտանիքով Վայոց ձորի Զեղեա գյուղում բնակություն է հաստատել 1988 թ.-ից, երբ հայ-ադրբեջանական նոր սկսվող հակամարտության հետևանքով Նախիջևանի հնագույն Ազնաբերդ գյուղը ամբողջությամբ տեղահանվեց: Այդ ժամանակ նա 14 տարեկան էր: Աշխատասեր ընտանիքը համակերպվեց նոր պայմաններին և ամրապնդվեց Զեղեա գյուղում՝ բազմաթիվ հայրենակիցների հետ մեկտեղ:**

Մի քանի տարի անց երիտասարդ աղջիկը բախտը կապեց համագյուղացի Վաչագան Խաչատրյանի հետ՝ ստեղծելով ամուր ու երջանիկ մի ընտանիք, որտեղ մեծանում են չորս երեխաներ՝ դաստիարակվելով ծնողների աշխատասիրությամբ ու բարությամբ:

Շաղիկի առօրյան սկսվում է առավոտյան ժամը 6-ից և ավարտվում ուշ գիշեր՝ համակարգչի մոտ վերջին լուրերի ընթերցանությամբ: Վաղ առավոտյան կովերին, ոչխարներին, հավերին ու ճագարներին կերակրելուց հետո նրան սպասում է աշխատանքը տնամերձում, արանքում՝ տնային հոգսերը, որոնցում անգնահատելի է նաև ավագ դուստրերի օգնությունը: Սակայն մտքում ջերմոցն է, ուր ընկերուհիների հետ շտապում է՝ իրականացնելով ամենօրյա գրաֆիկով նշված աշխատանքները:

Անցյալ տարի Օքսֆամի աջակցությամբ կառուցված և Զեղեայի կանանց կոոպերատիվին տրամադրված 400 քմ մակերեսով ջերմոցում ցանել էին լոլիկ և տաքդեղ: Շաղիկն ասում է՝ սիրով է աշխատում կոոպերատիվում, քանի որ համատեղ աշխատանքը հետաքրքիր է, մթնոլորտը՝ ջերմ, այն զուգորդվում է կատակներով, միասին ընդմիջումներով, միմյանց սովորեցնելով և փորձի փոխանակմամբ: Կոոպերատիվն արտադրած բանջարեղենի սպառման խնդիր չի ունեցել՝ հենց մարզի տարածքում էլ կարողացել են արտադրանքն իրացնել:

Մեր հարցին, թե ինչպե՞ս է հասցնում զուգակցել բազմանդամ ընտանիքի հոգսերն ու սեփական տնտեսությունում աշխատանքը կոոպերատիվում ակտիվ մասնակցության հետ, Շաղիկը պատասխանում է. «Ամեն ինչն էլ սիրով եմ անում, դրա համար էլ հասցնում եմ: Օքսֆամը և գործընկեր կազմակերպությունները միշտ մեր կողքին են և տալիս են մեզ հարկ եղած աջակցությունը»:

Շաղիկը մեծ ներդրում ունի 31 կանանց միավորող Զեղեայի կոոպերատիվի կայացման ու հաջողությունների մեջ:

# «Մեկը բոլորի, բոլորը՝ մեկի համար»

**Մարիամ Մարգարյանը Վայոց ձորի Ազատեկ գյուղի կանանց կոոպերատիվին անդամակցել է հիմնադրման օրվանից: «Սկզբում այնքան էլ լավ չէինք պատկերացնում, թե ի՞նչ կարող է մեզ տալ աշխատանքը կոոպերատիվում, սակայն Օքսֆամի և գործընկերների աջակցությամբ կազմակերպված բազմաթիվ դասընթացների և ընթացիկ աշխատանքային փորձառության շնորհիվ շատ բան սովորեցինք, իսկ ամենակարևորը՝ հասկացանք, որ մեզնից շատ բան է կախված»,- ասում է Մարիամը:**

Չնայած գյուղի կնոջ զբաղվածությանը՝ Մարիամը օրական 2-3 ժամ է գտնում կոոպերատիվում աշխատելու համար՝ կատարելով ամենապատասխանատու աշխատանքները: «Գյուղի կնոջ համար շատ դժվար է տնից մի քանի ժամով բացակայելը. չորս երեխաների հոգսը, սեփական գյուղացիական տնտեսությունը, որտեղ ամուսնուս հետ հավասարապես ծանրաբեռնված եմ, շատ ժամանակ են պահանջում, սակայն անհամբերությամբ եմ սպասում այն պահին, երբ ջերմոցում պետք է կանանցով աշխատենք, քանի որ կոլեկտիվ աշխատանքը լրիվ ուրիշ զգացողություններ է պարգևում»,- ժպիտով ասում է Մարիամը:

33 անդամ ունեցող Ազատեկի կանանց գյուղատնտեսական կոոպերատիվի համար մեծ նշանակություն ունեցավ նաև Օքսֆամի աջակցությամբ կառուցված սառնարան-պահեստարանը: Մարիամի ընտանիքն այստեղ պահեստավորած տանձը մյուս համագյուղացիների հետ հաջողությամբ իրացրեց Երևանի գյուղատնտեսական շուկաներում:

«Հույս ունենք՝ հաջորդ տարիներին ավելի զարգացնել մեր կոոպերատիվն ու ավելի մեծ եկամուտ ստանալ»,- ասում է նա:

Կոոպերատիվում կանայք աշխատում են «Մեկը բոլորի, բոլորը՝ մեկի համար» սկզբունքով: «Մեզ դրական լիցքեր են հաղորդում նաև զանազան փառատոները և բերքի տոները, որտեղ կարողանում ենք ներկայացնել մեր ձեռքբերումներն ու մեր արտադրանքը, և որտեղ արժևորվում է մեր աշխատանքը»:

# «Գյուղն այն հենարանն է, որին պետք է ամուր հենվել»

**Տավուշի մարզի Հովք համայնքում Օքսֆամի աջակցությամբ հիմնված ջերմոցային տնտեսության նախագահ Ալվարդ Չատյանն իր ամբողջ էությամբ կապված է գյուղին, թեպետ մինչ այդ ողջ կյանքն ապրել է քաղաքում, աշխատել է Նոր Հաճնի «Շողակն» գործարանում: Երբ աշխատանք չունենալու պատճառով վերադարձավ Հովք, չէր էլ մտածում, որ այդչափ կնվիրվի բնությանն ու գյուղի խնդիրներին: Ավելին, մտածում է ավագանու անդամ առաջադրվելու մասին, քանի որ դա իրեն մարդկանց օգնելու լրացուցիչ հնարավորություններ կտա:**

Ջերմոցային տնտեսության հիմնադրման առաջին իսկ օրվանից լծվեց գործին՝ իր լավատեսությամբ վարակելով համագյուղացիներին: Սկզբում դժվար էր, բայց կարողացավ հաղթահարել փորձի պակասը, մասնակցելով ջերմոցային տնտեսության շահագործման վերաբերյալ դասընթացների՝ ձեռք բերեց համապատասխան գիտելիքներ: Կոլեկտիվի 15 անդամներն ընտրեցին նրան ջերմոցային տնտեսության նախագահ՝ հաշվի առնելով նրա՝ աշխատանքի նկատմամբ համառությունը և մարդկային վառ անհատականությունը:

Նորաստեղծ ջերմոցային տնտեսության հետ մեծ հույսեր է կապում նախագահը: Ասում է՝ աշխատատեղ է, 15 ընտանիք գյուղը չի լքի, առանց այն էլ շատերն են հեռանում: Սիրտը շատ է ցավում գյուղի համար, քանի որ փախստականներով բնակեցված Հովքում բնակիչների մեծ մասը թողնում-հեռանում է գյուղից: Տիկին Ալվարդը փորձում է հասկանալ, բայց ոչ արդարացնել գնացողներին...

- Իհարկե, գյուղը զուրկ է նվազագույն կոմունալ պայմաններից և քաղաքում ապրած մարդկանց դժվար է հարմարվել դրան: Բայց, դե, գյուղը այն հենարանն է, որին պետք է ամուր հենվել՝ հողը կպահի գյուղացուն, մնում է միայն աշխատել: Կոմունալ հարմարությունները ոչինչ չարժեն, եթե մարդ չի կարողանում արարել ու ստեղծել,- համոզված է նա:

## Նորարարություն

### «Յուրաքանչյուր աշխատանքին պետք է ստեղծագործաբար մոտենալ»

**47-ամյա Արմենուհի Աղաբաբյանը, ով ապրում և հողագործությամբ է զբաղվում Ախթալայում (Լոռու մարզ), Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագրի ակտիվ շահառուներից է:**

Արմենուհի Աղաբաբյանը Շամլուղում և Փոքր Այրումում գտնվող իր հողակտորներում աճեցնում է պտղատու ծառեր, ինչպես նաև բանջարեղենի ու հատապտուղների տարբեր տեսակներ: Հողագործության հանդեպ նրա սերն ու հետաքրքրությունն առաջացել են դեռևս մանկության տարիներին.

- Հիշում եմ՝ երբ փոքր էի, սիրում էի հետևել, թե ինչպես են մեծերը, մասնավորապես, պապս այգում աշխատում: Հայրս շատ հաճախ թույլ չէր տալիս, որ ես ինչ-որ բանով օգնեի իրենց, բայց ես, միևնույնն է, կարտոֆիլ էի մշակում, մոլախոտերն էի հավաքում, ծաղիկներ էի աճեցնում: Ամենաշատը խոտհունձն էի սիրում, մշտապես գնում էի և իմ մասնակցությունն ունենում,- պատմում է նա:

Արմենուհի Աղաբաբյանն առանձնահատուկ հաճույքով է խոսում իր սիրած զբաղմունքներից մեկի՝ մեղվապահության մասին: Սկզբնական շրջանում քիչ մեղվաընտանիքներ են ունեցել, սակայն շատ կարճ ժամանակահատվածում դրանց թիվն ավելացել է՝ հասնելով 10-ի: Ասում է՝ բազմաթիվ նրբություններ կան, որոնց հարկավոր է տիրապետել՝ մեղվաընտանիքները պահպանելու և ավելացնելու, որակյալ մեղր ստանալու համար:

Երկու զավակների, զինվորի մայր է. հպարտությամբ նշում է, որ իր որդին հայրենիքի հանդեպ պարտքն է կատարում ՀՀ զինված ուժերում: Արմենուհի Աղաբաբյանը մասնագիտությամբ մանկավարժ է. ռուսաց լեզու է դասավանդում Ախթալայի 1-ին դպրոցում՝ այն դպրոցում, որտեղ ինքն է սովորել:

Իր այգիների բերք ու բարիքից պահածոներ, անուշահամ չրեր, թթու լավաշ ու շարոց է պատրաստում: Պատմում է, որ վերջին անգամ յուրահատուկ ձևով է պատրաստել շարոցի շփոթը. օգտագործել է տանձ ու խնձոր, որոնք հետաքրքիր համ ու բուրմունք են հաղորդել շարոցին.

- Հարկավոր է յուրաքանչյուր աշխատանքին ստեղծագործաբար մոտենալ, սեր ու հոգի ներդնել, այնպես անել, որ դրանից օգուտ քաղեն ու շահեն նաև ուրիշները:

Ազատ ժամանակ զբաղվում է նաև ձեռագործով՝ ասեղնագործությամբ, հեյլուճագործությամբ և շյուղագործությամբ: Տոնական օրերին դրանք գեղեցիկ փաթեթավորում և նվիրում է հարևաններին, հարազատներին, ընկերուհիներին՝ հաճելի անակնկալներ մատուցելով նրանց:

Այսպիսին է մեր հերոսուհին. չնայած իր բազմազբաղ ու հագեցած առօրյային՝ միշտ փնտրտուքի մեջ, փորձում է ընդլայնել իր տնտեսությունը, կյանքի կոչել իր բազմաթիվ գաղափարները և սեփական լուման ներդնել ոչ միայն իր ընտանիքի, այլև հարազատ համայնքի բարօրության ու զարգացման գործում:

## Շնորհավորում ենք

Կանանց միամսյակի մեկնարկին՝ մարտի 8-ին, կայացած «Գյուղմթերք արտադրող կին հերոս-2014» ազգային մրցանակաբաշխությանը նվիրված հանդիսության ընթացքում ամփոփվեցին նաև Օքսֆամ միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան գրասենյակի կողմից հայտարարված «Կանանց իրավունքները Հայաստանում. դե յուրե և դե ֆակտո» խորագրով մրցույթի արդյունքները՝ մարզային լրագրողների, հանրային թղթակիցների և բլոգերների մասնակցությամբ:

Մրցույթին ներկայացվել էին 48 աշխատանք՝ տպագիր և առցանց հոդվածներ, հեռուստատեսային հաղորդումներ և ռեպորտաժներ, բլոգային նյութեր: Ժյուրիի որոշմամբ՝ հեղինակներից յոթն արժանացան մրցանակների և շնորհակալագրերի:

Մրցույթի անցկացման կազմակերպչական աշխատանքներին իրենց ներդրումն են ունեցել Ասիական զարգացման բանկը և «ՊրոՄեդիա-Գենդեր» ՀԿ-ն:

**Շնորհավորում ենք մրցույթի բոլոր հաղթողներին՝ նորանոր հաջողություններ մաղթելով նրանց՝ կանանց իրավունքների պաշտպանության թեմաները լուսաբանելու հարցում:**

**Համարի վրա աշխատել են՝**

Արմինե Գևորգյանը, Նաիրա Խաչիկյանը, Լիա Խոջոյանը, Մարինա Զուհարյանը, Լիլիթ Պետրոսյանը, Անուշ Շիլաջյանը, Զավահիր Եղիազարյանը

OXFAM

Հատուկ թողարկումը պատրաստվել է ՕՔՍՖԱՄ-ի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ

Խմբագիր՝ Թամարա Հովնաթանյան
էլ. հասցե՝ womennetam@gmail.com